Ոչ պաշտոնական թարգմանություն

7 փետրվարի, 2008թ.

ՀՀ Արտգործնախարար
պ-ն Վարդան Օսկանյանին

պատճեն՝ Գյուղատնտեսության նախարարին

պատճեն՝ Առողջապահության նախարարին

Հղումներ.

(ա) 2000թ. հուլիսի 24-ի Ամերիկայի Միացյալ Նահանգների ու Հայաստանի Հանրապետության կառավարությունների միջև զանգվածային բնաջնջման զենքերի չտարածման ոլորտում համագործակցության համաձայնագիր (հայ-ամերիկյան շրջանակային համաձայնագիր)

(բ) ՀՀ արտաքին գործերի նախարարության թիվ 8/13401 դիվանագիտական հայտագիր, որով փոխանցվում էր ՀՀ առողջապահության նախարար Քուշքյանի 2007թ. հոկտեմբերի 23-ի գրությունը Վտանգի նվազեցման համագործակցային աջակցության վերաբերյալ

(գ) Դեսպան Էրիկ Էդելմանի 2007թ. նոյեմբերի 14-ի պատասխանն ուղղված առողջապահության նախարար Քուշքյանին

Մեծարգո պ-ն Օսկանյան,

Շնորհակալություն եմ հայտնում Ձեր կառավարությանը ԱՄՆ պաշտպանության դեպարտամենտի Վտանգի նվազեցման համագործակցային ծրագրի շրջանակում իրականացվող Կենսաբանական վտանգի նվազեցման ծրագրի հանդեպ ցուցաբերած հետաքրքրության համար: Ինչպես 2007թ. նոյեմբերի 14-ի իր նամակում նշել էր դեսպան Էդելմանը, Պաշտպանության դեպարտամենտը ողջունում է կենսաբանական ահաբեկչության ու հնարավոր պանդեմիաների վտանգի դեմ պայքարում Ձեր կառավարության հետ գործակցելու հնարավորությունը:

Կենսաբանական վտանգի նվազեցման ծրագրի շրջանակում Պաշտպանության դեպարտամենտն աշխատում է տարբեր նախարարությունների, մասնավորապես առողջապահության ու գյուղատնտեսության նախարարությունների, պետական գերատեսչությունների ու կազմակերպությունների հետ կոնսոլիդացնելու հետազոտական և վտանգավոր պաթոգեն տարրերի վնասազերծման աշխատանքները, բարելավելու կենսաբանական անվտանգությունն ու ապահովությունը, ընդլայնելու կենսաբանական ահաբեկչության ու հնարավոր պանդեմիաների հայտնաբերման, ախտորոշման ու հաղորդման հզորությունները և ձևավորելու ռազմավարական գործընկերություններ

հետազոտություններ ասպարեզում: Կենսաբանական վտանգի նվազեցման ծրագիրը ձևավորում է հիվանդությունների մոնիտորինգի ու ախտորոշման կենտրոնների ցանց յուրաքանչյուր երկրում, որոնք կապված են նախանշված ապահով ու անվտանգ մի վայրի հետ: Պաշտպանության դեպարտամենտը նախատեսում է, որ առանձին երկրների ցանցերը կարող են միացվել տարածաշրջանային գործընկերների ցանցերին՝ հիվանդությունների մոնիտորինգի, հաղորդման ու զսպան հնարավորությունները մեծացնելու նպատակով:

Կենսաբանական վտանգի նվազեցման ծրագրով Հայաստանի հետ աշխատելու համար նախնառաջ պահանջվում է կնքել իրականացման համաձայնագիր, ինչպես նախատեսվում է հոդվածների (ա) կետում նշված համաձայնագրի 3-րդ հոդվածով: Կենսաբանական վտանգի նվազեցման իրականացման համաձայնագրի տեքստը ներկայացվում է Ձեր քննությանը: ՀՀ կառավարությունը պետք է որոշի, թե որ գերատեսչությանն է վերապահվում այս աշխատանքների գործադիր կառավարումը: Քանզի աշխատանքներում ներգրավվում են տարբեր նախարարություններ, մենք նկատել ենք, որ առավել արդյունավետ է այն տարբերակը, երբ գործադիր կառավարումը վերապահվում է մի այնպիսի մարմնի, որ հանդիսանում է վերադաս բոլոր մասնակից նախարարությունների հանդեպ, ինչը թույլ է տալիս ապահովել ծրագրի համակարգումն ու համագործակցությունը:

Ես պատրաստ եմ 2008թ. մարտի 10-ի շաբաթվա ընթացքում պատվիրակություն գործուղել Հայաստան կառավարությանը Կենսաբանական վտանգի նվազեցման ծրագրին ծանոթացնելու, համաձայնագիրը վերջնականացնելու ու Հայաստանում ծրագրի իրականացման պահանջների գնահատման նպատակով նախնական տեղայցերը իրականացնելու նպատակով:

Պաշտպանության դեպարտամենտը սպասում է Ձեզ հետ համագործակցությանը այս նոր կարևորագույն ծրագրի շրջանակում:

Հարգանքով՝

Ռիչարդ Դուգլաս
Չտարածման, թմրադեղերի ու համընդհանուր
վտանգների կանխման հարցերով
Պաշտպանության փոխքարտուղարի տեղակալ

Առդիր՝ Կենսաբանական վտանգի նվազեցման իրականացման համաձայնագրի տեքստը